ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 41

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

02-ը նոյեմբերի 2019թ.

Նիստը նվիրված էր ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակին, ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը, նիստին հրավիրված էին ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար **Ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Գևորգյանը**, ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր **Ա.Մալխասյանը,** ԵՊՀ գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, ասիստենտ **Լ. Հովսեփյանը**, հրավիրված էին նաև ԵՊՀ ԻՄ-ի մի շարք աշխատակիցներ:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Նիստը հոբելյանական էր և օրակարգում կար մեկ հարց.

- ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակի հետ կապված հուշամեդալների և պատվոգրերի հանդիսավոր հանձնումը: / Զեկուցող **Ա.Հ. Մակարյան /**

Ելույթ ունեցան ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար **Գեղամ Գևորգյանը**, ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Անուշավան Մակարյանը**:

Պարոն **Ա.Մակարյանը**, շնորհավորելով մայր համալսարանի 100 և նրա մասնաճյուղի 25-ամյակները, մաղթեց, որ նրանք ունենան աննախընթաց վերելք ապրող գիտական հզոր ներուժ, ստեղծագործ ու նախաձեռնող ուսանողություն. «Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ստեղծման, նրա լինելության 25-ամյա հոբելյանի

առթիվ և մաղթում, որ հավերժական լինի նրա երթը պատմության հոլովույթում, նորանոր սերունդներ կրթվեն նրա տված գիտության լույսով ու դառնան մեր ժողովրդի պայծառ ապագայի կերտողները:

Պարոն **Գ.Գևորգյանը**, Մայր բուհի հիմնադրման 100-ամյակի և մասնաճյուղի 25-ամյակի կապակցությամբ շնորհավորելով բոլոր համալսարանականներին ու ներկաներին, նշեց, որ հոբելյանական այս միջոցառումը ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների շղթայի կարևոր օղակներից է: Իր խոսքում ԵՊՀ ռեկտորն ընդգծեց մասնաճյուղի ոչ միայն գոյության, այլև նրա զարգացման անհրաժեշտությունը: Նշվեց, որ քսանհինգ տարի է, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կատարում է ոչ միայն կրթական գործառույթներ, այլև ազգապահպան գործունեություն Հայաստանի Հանրապետության համար. «Կրթօջախը կարևորվում է նաև այն գործառույթով, որ շենացնում է մի ամբողջ մարզ՝ մեր հայրենիքի մի կարևոր հատված», նա նշեց, որ եթե չլիներ ԵՊՀ ԻՄ-ը հարյուրավոր երիտասարդներ չէին մնա տարածաշրջանում, կմեկնեին մայրաքաղաք կամ արտագնա աշխատանքի:

Այնուհետև տեղի ունեցավ Մայր բուհի 100-ամյակի և մասնաճյուղի 25-ամյակի կապակցությամբ հուշամեդալների և պատվոգրերի հանձնման հանդիսավոր արարողությունը՝ ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար **Գ.Գևորգյանի**, ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանի, ԵՊՀ** ԻՄ-ի գիտքարտուղար **Մ. Աթոյանի** մասնակցությամբ:

Համալսարանական կրթության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 25-ամյակի կապակցությամբ ԵՊՀ-ի ոսկե մեդալով պարգևատրվեցին ԵՊՀ ԻՄ-ի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. **Արտակ Վոլոդյայի Ցուցուլյանը** և ԵՊՀ ԻՄ-ի

տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դասախոս **Յուրա Իսրայելի Բեկնազարյանը**: ԵՊՀ-ի արծաթե մեդալով պարգևատրվեցին ԵՊՀ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտներ, բան. գիտ. թեկնածուներ **Ալիսա Զավենի Հասանյանը** և **Աիդա Ասիլբեկի Սարհատյանը**:

ԵՊՀ-ի հիմնադրման 100-ամյակի առթիվ պատվոգիր ստացան ԵՊՀ ԻՄ-ի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. **Վարդան Արամայիսի Ալեքսանյանը**, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. **Մուշեղ Լևոնի Սարուխանյանը**, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ **Անուշ Աղաջանի Սարիբեկյանը**, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դասախոս **Գեղամ Վոլոդյայի Գուլակյանը**, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս **Քնար Վլադիմիրի Օթարյանը**, ՄԿՊԿ բաժնի տեսուչ **Անահիտ Վառլամի Սարիբեկյանը**:

ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակի կապակցությամբ պատվոգրերի արժանացան մասնաճյուղի մի շարք աշխատակիցներ (պարգևատրված աշխատակիցների ամբողջական ցանկը տե՛ս **Հավելված 1**):

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը շնորհավորեց պարգևատրված աշխատակիցներին, և նշեց, որ դրանք ԵՊՀ ԻՄ-ի այն աշխատակիցներն էին որոնք սկսել էին աշխատել մեր հաստատությունում 1991-1995 թվականներին և շարունակում են աշխատել: ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնակատար Ա. Մակարյանը հույս հայտնեց, որ մեր պարգևատրված փորձառու աշխատակիցները կշարունակեն աշխատել նույն երիտասարդական ավյունով և իրենց փորձը կփոխանցեն երիտասարդներին:

Վերջում ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնակատար Ա. Մակարյանը ներկաներին հրավիրեց մասնակցելու Բնական գիտությունների ֆակուլտետի միջանցքում կազմակերպված ցուցահանդեսին և ֆուրշետին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ